Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի Յա.Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Հանրահաշիվ», «Երկրաչափություն» /6 դասաժամ/, «Մայրենի» /7 դասաժամ/ և «Տեխնոլոգիա» /4 դասաժամ/ առարկաների թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_ դիմում /Ձև 1/,

_ մեկ լուսանկար 3X4 չափի,

_ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

_ անձը հաստատող փաստաթուղթ

_«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/,

_ ինքնակենսագրություն /Ձև 5/

_ այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/

-- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 2-ին՝ ժամը 12:00 –ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի Յա.Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Սևան, Խաղաղության 3:

Տեղեկությունների համար զանգահարել 094480052 հեռախոսահամարով: